ՄԻ ՔԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ Հայաստանի անկախության համար զոհված հերոսների հիշատակին հուշարձան կառուցելու վերաբերյալ

1918 թ. մայիսի 28-ին Հայոց ազգային խորհրդի կողմից Հայաստանի անկախության հռչակումով հայ ժողովուրդը վերագտավ դարեր առաջ կորցրած իր պետականությունը։ Հաջորդ տարի՝ 1919 թ. գարնանը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը կազմակերպեց և մեծ շուքով նշեց անկախության առաջին տարեդարձը։ Երևանում, հանրապետության մյուս քաղաքներում և գավառային կենտրոններում տեղի ունեցան շքեղ հանդիսություններ, զինվորական և քաղաքացիական շքահանդեսներ։ Այդ օրերին էր, որ հանրապետության Նախարարների խորհուրդը քննարկեց հանրային կրթության և արվեստի նախարար Գ. Մելիք-Ղարագյոզյանի առաջարկը և համապատասխան օրինագիծ ընդունեց Հայաստանի անկախության համար զոհված մարտիկների հիշատակը հավերժացնող՝ Երևանում հուշարձան կառուցելու վերաբերյալ։ Նախատեսվում էր այն իրականացնել ժողովրդի նվիրատվություններով։ Չնայած երկրում տիրող կարիքին ու թշվառությանը, ժողովուրդը մեծ սիրով արձագանքեց հուշարձանի կառուցման համար հանգանակություն կազմակերպելու կոչին։ Կարճ ժամանակահատվածում Հայաստանի գրեթե բոլոր ծայրերից հազարավոր ռուբլիներ հանգանակվեցին և ուղարկվեցին այդ նպատակով պետական բանկում բացված հաշվի համարով։ Դժբախտաբար, 1920 թ. մայիսյան ապստամբությունը և դրան հաջորդած իրադարձությունները ինչպես շատ այլ, այնպես էլ այս մտահղացումը թողեցին անկատար։

Ստորև ներկայացնում ենք այս իրադարձության վրա լույս սփռող մի քանի նորահայտ վավերագրեր, որոնք վերցված են Հայաստանի Հանրապետության պետական կենտրոնական պատմության արխիվից (ՀՀ ՊԿՊԱ)։

Ա. Շ. ՍԻՄՈՆՅԱՆ

26 մայիսի, 1919 թ.

Մինիստրների խորհրդին

Իրաքանչիւր ազգի քաղաքական, անգամ ֆիզիկական գոյութեան խմաստը եւ իւր էութեամբ մարդկային գաղափարի մէջ անհարազատութիւն, խոյսթիւն չմտցնելու գրաւականը պայմանաւորվում է այն վերաբերմունքով, որով այդ ազգը հանդէս կը բերի դէպի իւր կեանքի նշանակալից դեպքերն ու դէմքերը։

Պատմական արժէքների գնահատման շոշափելի առարկայական երևոյթներն արդէն ինքնին խօսում են տուեալ ազգի կենսունակութեան, նրա ոգու բարձրութեան և ըստ այնմ քաղաքական գոյութեան իրաւունքի օգտին։

Մի երկու օրից հայ ժողովուրդը տօնում է իր դարաւոր երազանքների իրականացման—Ազատ Հայաստանի տարեդարձը։ Այդ տարեդարձին շուք ու փայլ կտան անշուշտ այլ և այլ զարդարանքներ, խորհրդաւոր ձեռնարկութիւններ, զգացած զեղուն ճառեր և այլն և այլն, սակայն սրանք բոլորը անցողական բնոյթ կրող, ոգեկի տրամադրութիւն ստեղծող հանգամանքներ են։

Մինչդեռ մեր ազատութիւնը դարբնող անթիւ զոհերը իրաւունք ունեն մեզանից աւելին պահանջելու, միւս կողմից էլ մեր ապագա սերունդը իրաւացիորէն պահանջում է մեզանից, որ ընկած հերոսների գործունէութիւնը, այն է՝ հայ ազգի ազատագրման պատմութիւնը չմնա խաւարի մէջ թաղուած, անյայտ, այլ միջոցներ ձեռք առնուեն ցաք ու ցրիւ ընկած արժէքաւոր տվեալներ ի մի հաւաքելու եւ մի ամփոփ պատկեր տալու հայ ազատութեան։

Արդ, մեզ վրա ընկած այս պարտականութիւնները իրականացած լինելու համար, խնդրում եմ խորհրդից ընդունել հետևեալ

ՕՐԻՆԱԳԻԾԸ

1. Վարկ բանալ Հանրային կրթության մինիստրի անունով հայ ազատության հերոսների յիշատակին Հայաստանի մայրաքաղաքում մի յուշարձան կանգնեցնելու յամար, 100.000 ռուբլի արձանի ֆոնդի և 25.000 ռուբլի արձանի մրցանակաբաշխության յամար։

2. Վարկ բանալ Հանրային կրթության մինիստրի անունով հրատարակելու «Հայ ազատագրության վերջին էջը» (Համաշխարհային պատերազմի սկզբից մինչև Հայաստանի անկախ յայտարարությունը)։ Հրատարակության համար 150.000 ռուբլի, իսկ մրցանակաբաշխության համար 25.000 ռուբլի, հրատարակությունից ստացված արդիւնքը մտցնել պետական գանձարան։

3. Վարկ բանալ զորական մինիստրի անունով հայ քաջ մարտիկ հերոսների օրինակը և յիշատակը մշտ վառ պահելու յամար հաստատելու մի շքանշան «Հայրենիքին սրած ծառայության համար» է շքանշանի խորհրդանիշը։ Նոյնպէս ընդունել մրցանակաբաշխության միջոցով, որի համար հատկացնել 500 ռուբլի, իսկ շքանշանները պատրաստել տալու յամար 15.000 ռուբլի։

Յուշարձանի ֆոնդը հարստացնելու համար մի կշռով դիմել հայությանը։

Հանրային կրթության մինիստր ստորագրություն
Դիվանապետ ստորագրություն

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 207, ց. 1, գ. 249, վ. 2։

ՕՐԱԳԻՐ

Մինիստրների խորհրդի 1919 թ. մայիսի 26-ի նիստի

Լսեցին.

6. Հանրային կրթության մինիստրի զեկուցումը.

ա. Հայ ազատագրության հերոսների յիշատակին Հայաստանի մայրաքաղաքում յուշարձան կանգնեցնելու համար 100.000 ռուբլի յատկացնելու, իսկ արձանի մրցանակաբաշխության համար 25.000 ռուբլի յատկացնելու մասին։

բ. «Հայ ազատագրության վերջին էջը» հրատարակելու համար 286.000 ռուբլի յատկացնելու մասին։

գ. «Հայրենիքին սրած ծառայության համար» մակագրությամբ շքանշաններ հրատարակելու համար 20.000 ռուբլի յատկացնելու մասին։

Որոշեցին.

ա. Հայ ազատագրության յիշատակին Հայաստանի մայրաքաղաքում յուշարձան կանգնեցնելու համար ֆոնդ հիմնել և 1919 թ. ապրիլի օրէնքի համաձայն յատկացնել այդ ֆոնդին 25.000 ռուբլի։

բ. Համաձայն 1919 թ. ապրիլի 27-ի օրէնքի, բանալ Հանրային կրթության մինիստրությանը 285.000 ռուբլի «Հայ ազատագրության վերջին էջը» հրատարակելու համար։

գ. Համաձայն 1919 թ. ապրիլի 27-ի օրէնքի, «Հայրենիքին սրած ծառայության համար» մակագրությամբ շքանշաններ հրատարակելու համար բանալ զինուորական մինիստրությանը 20.000 ռուբլի։

ՀՀ ՊԿՊԱ, վ. 1։

Հայաստանի Հանրապետության
Հանրային կրթության և
արուեստի Մինիստրություն

Մինիստրների խորհրդի մայիսի 26-ի նիստի որոշմամբ Հայաստանի մայրաքաղաքում՝ Հայ ազատագրական հերոսների յիշատակին յուշարձան կանգնեցնելու նախագծի մրցանակաբաշխության համար հատկացուած է քսան հինգ հազար ռուբլի (25.000 ռ.)։ Մինիստրությունս այս մասին յայտնելով ի գիտություն, խնդրում է բոլոր արուեստագէտներին, որոնք կցանկանան մասնակցել այդ մրցանակաբաշխությանը, իրենց պարտաւորում է նախագծերն ուղարկել Մինիստրություն։

Մինիստր ստորագրություն

Դիվանապետ ստորագրություն

ՀՀ ՊԿՊԱ, գ. 301, թ. 30։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հանրային կրթության և արվեստից մինիստրությունը յայտարարում է Հայաստանի քաղաքացիներին ի գիտություն, որ կառավարության որոշմամբ Հայ ազատագրության մարտիկների յիշատակին կառուցվելիք յուշարձանի համար կազմուած ֆոնդի օգտին գանձուած բոլոր դրամները պետք է մուծել Երևանի գանձատուն, Ընթացիկ հաշիւ № 228647։

ՀՀ ՊԿՊԱ, գ. 28, թ. 29։

Господину управляющему Эриванским отделением
Государственного банка
от Министра Народного Просвещения

Желая открыть в Эриванском отделении Государственного банка на имя Министра Народного Просвещения фонд на сооружение памятника героям освобождения Армении текущий счет, имею честь сообщить, что чеки будут подписаны мною следующим образом.

Министр Народного Просвещения.

Мы, нижеподписавшиеся, удостоверяем, что подпись господина Министра Народного Просвещения Господина Мелика-Каракозова действительно учинена им.

4 июня 1919 г. Правитель канцелярии подпись

№ 1089 Делопроизводитель подпись

Կառավարություն
Հայաստանի Հանրապետության
4 յունիսի 1919 թ.
Երևան
Ներքին գործերի մինիստր

Հանրային կրթության մինիստր
պարոն Գ. Մելիք-Ղարագեոզեանին

Սորա հետ պատիվ ունեմ ուղարկելու Ձեզ Ղամարլուի շրջանում Հայաստանի Հանրապետության անկախության առաջին տարեդարձի օրը Ազատությունն համար զոհուած զինուորների և մարտիկների համար կառուցելիք արձանի ֆոնդի օգտին հանդանակուած 5320 ռ. 80 կ.՝ հանդերձ Ղամարլուի շրջանի կոմիսարի գրությամբ և հանգանակությունը կազմակերպող մասնաժողովի վարչության որոշմամբ։

Ներքին գործերի մինիստր ստորագրություն
Ի. տ. դիւանապետ ստորագրություն

ՀՀ ՊԿՊԱ, թ. 40։

№ 836
10 июня 1919 г. Господину Министру Внутренних дел

Комитет, организованный согласно Вашей телеграмме от 11 мая сего года за № 1965, постановил: тысяча руб., предназначенные на расходы для празднования дня 28 мая, обратить в фонд для сооружения памятников борцам за независимость Армении в столице Армении.

О чем доношу на распоряжение.

Уездный комиссар подпись
Секретарь подпись.

ՀՀ ՊԿՊԱ, թ. 16։

Կառավարություն
Հայաստանի Հանրապետության

Ներքին գործոց մինիստր
4 յունիսի 1919
Երևան

Հանրային կրթության մինիստր
պարոն Գ. Մելիք-Ղարագեոզյանին

Սորա հետ պատիւ ունիմ ուղարկելու Էջմիածնի շրջանում Հայաստանի հանրապետության անկախության առաջին տարեդարձի Ազատության համար զոհուած զինուորների և մարտիկների համար կառուցելիք արձանի ֆոնդի օգտին 2712 ռուբլի՝ հանդերձ Էջմիածնի շրջանի կոմիսարի № 1962 գրությամբ և հանգանակությունը կազմակերպող մասնաժողովի վարչության որոշմամբ։

Պաշտօնակատար ներքին գործերի մինիստրի ստորագրություն
Դիւանապետ ստորագրություն

ՀՀ ՊԿՊԱ, գ. 249, թ. 38։

Հայաստանի Հանրապետություն
Մինիստրություն
Հանրային կրթության
5 յունիսի 1919 թ.

Ներքին գործոց պարոն մինիստրին

Մինիստրությունս ստացավ Ձեր սոյն թվի յունիսի 4-ի № 7293 և 7292 գրությունների մէջ յիշատակուած 8532 ռուբլի՝ յօգուտ Հայաստանի ազատության համար զոհուած զինուորների և մարտիկների համար կառուցելիք յուշարձանի Ֆոնդին։

Հանրային կրթության մինիստր ստորագրություն
Դիւանապետ ստորագրություն

ՀՀ ՊԿՊԱ, թ. 9։

Комиссар
Карсского уезда
8 февраля 1920 г.
№ 356

В канцелярию
Министерства Народного Просвещения
и искусства

Препровождая при сем две подлинных квитанций Эриванского отделения Государственного Банка за №№ 4 и 28 на сумму 12.496 руб., прошу названную сумму зачислить в фонд сооружения памятника «Героям освобождения Армении».

Уездный комиссар подпись
Делопроизводитель подпись

ՀՀ ՊԿՊԱ, թ. 11ա։

Կրթության և արվեստի
Մինիստրություն
24 յունիսի 1919 թ.

Ներքին գործերի պարոն մինիստրին

Դիւանս պատիւ ունի հայտնելու, որ ստացվեց Ձեր ս/թ յունիսի 24-ի թիվ 7.699 գրության հետ 628 ռ. 14 կ. հանգանակած գումարը Օշական գյուղից՝ հայ ազատագրության հերոսների հիշատակին կառուցելիք յուշարձանի ֆոնդի օգտին։

Դիւանապետ՝ ստորագրություն
Գործավար՝ ստորագրություն

ՀՀ ՊԿԿԱ, թ. 26։

Ն.Գ.Մ.
3 յունիսի 1919 թ.
№ 1962

Ներքին գործերի պարոն մինիստրին

Սոյն գրության հետ ներկայացնում եմ 2.712 ռուբլի, նուիրված Արարատի շրջանից՝ ի յիշատակ Հայաստանի ազատության առթիւ պատերազմում ընկած զինուորների յուշարձան կանգնեցնելու համար և նուիրատուների ցուցակը։ [Ցուցակը կցված է]։

Կոմիսար՝ Ջալալեան
Գործաւար՝ Կիրակոսեան

ՀՀ ՊԿԿԱ, թ. 6։

Կարաւանսարայի
Հայաստանի Հանրապետության
Ներքին գործերի Մինիստր
24 յունիսի 1919 թ.
№ 7.699

Հանրային կրթության պարոն Մինիստրին

Պատիւ ունեմ ուղարկելու Ձեզ վեց հարիւր քսանութ ռուբլի 14 կոպ. (628 ռ. 14 կ.), որը Հայաստանի Հանրապետության անկախության տարեդարձի տօնի առթիվ հանգանակված է Օշական գյուղում, ազատության համար զոհուած մարտիկների յուշարձանի ֆոնդի համար։

Պաշտօնակատար Ներքին գործոց Մինիստրի ստորագրություն

Դիւանապետ ստորագրություն

Ծանօթ. վերոյիշեալ գումարից 250 ռուբլին մի հատ կերենսկի 250-անոց է։

Ի. տ. օգնականի դիւանապետի ստորագրություն

ՀՀ ՊՊԿԱ, թ. 30։

Карвансарайская
уездная
Земская Управа
22 августа 1919
№ 739

Господину Министру народного просвещения

Препровождая при сем отчетность, с оправдательными документами, праздника 28-го мая по поводу годовщины независимости Армянской Республики, и денежный перевод в размере 2257 руб. 75 коп., сообщаю, что сумма эта преобразовалась от сбора пожертвований на сооружение национального монумента в столице Армении.

Председатель Межведомственной комиссии
Заместитель Председателя Земской управы А. КАЛАНТАРЯН
Делопроизводитель Л. МАРКАРЯН

ՀՀ ՊՊԿԱ, թ. 1։